ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ Է/13/124-21 առ "22" 01 2021թ.

Ձեր _____ առ "___" _____ 2021թ.

«Յե Էս Թրեյդ» ՍՊԸ-ի
տնօրեն՝ պրն. Ե. Գյանջումյանին
E-mail: yees.0022llc@gmail.com

[№01/287 առ 10.09.2020թ. պայմանագրի
միակողմանի մասնակի լուծման վերաբերյալ]

Հարգելի պարոն Գյանջումյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար *լաբորատոր, չափիչ, հսկիչ, սփռիչ սարքերի, գեներատորի, կռունկային կշեռքի* (այսուհետ՝ ապրանքներ) ձեռք բերման նպատակով 2020թ. հուլիսի 23-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-97/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքի մատակարարման նպատակով «Յե Էս Թրեյդ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2020թ. սեպտեմբերի 10-ին կնքվել է թիվ 01/287 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 3 001 200 (երեք միլիոն մեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 1-ին չափաբաժնով սահմանված 1 հատ Ա4 304/1 տեսակի թվային վոլտմետրը, որի ընդհանուր գինը կազմում է 279600 (երկու հարյուր յոթանասունինները հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, «Յե Էս Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի՝

- 2.4.1 կետի <<Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով>>
- 2.1.7 կետի <<Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ <u>մասնակի</u>), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ բ) <<Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավելի>>

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Յե Էս Թրեյդ» ՍՊԸ-ի հետ 2020թ. սեպտեմբերի 10-ին կնքած թիվ 01/287 պայմանագիրը 1-ին չափաբաժնի մասով:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքի մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվի նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Գլխավոր տնօրենի ժ/պ՝ **Է. Մարտիրոսյան**

Կազմեց՝ ԳԲ 2-րդ կարգի մասնագետ՝
Կ. Համբարձումյանը,
+374 10 28 – 29 - 60